ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒՃԱՆԸ՝ ԴԱՎԹԻ ՎՐԱՆԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԵՍԱՅԻ 61.3

1 *Տեր Աստծու Հոգին ինձ վրա է, ըստ որում Տէրը օծել է ինձ. նա ուղարկել է ինձ աղքատներին աւետիք տալու,* ***կոտրած սիրտ*** *ունեցողներին բժշկելու,* ***գերիներին*** *ազատութիւն հրատարակելու եւ* ***կապեալներին՝*** *արձակում.* ***2*** *հռչակելու Տիրոջ ընդունելի տարին և մեր Աստծու վրեժխնդրության օրը, բոլոր սգավորներին մխիթարելու.* ***3*** *Սիոնի սգավորների համար որոշելու, որ նորանց*

փառք տրվի մոխրի տեղ,

ուրախության յուղ՝ սուգի տեղ,

գովաբանության պատմուճան՝ *հուսահատ հոգու փոխարեն.*

եւ նորանց պիտի կոչեն արդարության ծառեր, որ Տէրը տնկել է իր փառավորության համար:

> ***Գովաբանության պատմուճան*** *միայն մեկ անգամ է հիշատակվում ամբողջ Աստվածաշնչում՝ Եսայի 61.3 հատվածում:*

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԱՍՏՎԱԾ ՉԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԱՆԸ ԿԱՄ ՍՈՂՈՄՈՆԻ ՏԱՃԱՐԸ, ԱՅԼ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՀԵՆՑ ԴԱՎԹԻ ՎՐԱՆԸ

Դա է պատճառը, որ մոտ ***900 տարի անց****, Գործք Առաքելոց 15-ում, առաքյալները մեջբերում են Ամոսի մարգարեությունը.*

«Սրանից հետո կվերադառնամ ու Դավթի քանդված վրանը կվերաշինեմ, նրա ավերակները կվերակառուցեմ և կվերականգնեմ այն:»: – Գործք 15.16

Դավթի վրանը ուներ մի քանի կարևոր առանձնահատկություններ.

Դավթի վրանը տարբերվում էր Մովսեսի խորանից և Սողոմոնի տաճարից: Այնտեղ չկային ***վարագույրներ,*** *չկային* ***բաժանարար պատեր****, Դավթի վրանում զոհեր չէին մատուցվում:*

Գաբավոնը → Մովսեսի խորան

Երուսաղեմը → Դավթի վրանը և գովաբանության տունը

*Դավիթը Տիրոջ տան ծառայության համար նշանակել էր **4,000 երաժիշտ և երգիչ, 4000 դռնապահներ**: Նրանց մեջ կար մի հատուկ պատրաստված խումբ՝ **288 հմուտ առաջնորդ**, որոնք բաժանված էին **24 թիմերի՝ յուրաքանչյուրը 12 հոգուց**:*

«Դավթի վրանը» այսօր ներկայացնում է այնպիսի եկեղեցի, որտեղ Աստծո ներկայությունը հանդիսանում է կենտրոնական արժեքը, և որտեղ գովաբանությունը դառնում է այն բանալին, որ բացում է երկնքի դռները և ճանապարհ է պատրաստում Նրա փառքի հայտնությանը:

Գովաբանությունը չպետք է դադարի՝ ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը:

*Հայտնության գրքում գրված է, որ **քսանչորս ծերերը երկրպագում են գահի առաջ ցերեկ ու գիշեր**, իրենց պսակները գցելով գահի առաջ և ասելով.*

Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Ամենակալ՝ Տեր Աստված, որ էր և որ է և որ գալու է: Արժանի ես, Տե՛ր և Աստվա՛ծ մեր, որ ընդունես փառքը, պատիվը և զորությունը, որովհետև դու ամեն բան ստեղծեցիր, ու քո կամքով եղան և ստեղծվեցին: –Հայտնություն 4.8,11

ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆ ԲԱՆԱԼԻՆ Է, ՈՐ ԲԱՑՈՒՄ Է ԵՐԿՆՔԻ ԴՌՆԵՐԸ և ԲԵՐՈՒՄ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ՎՐԱ:

Գործք Առաքելոց 16-ում Պողոսն ու Շիղան ծեծվեցին, շղթայվեցին և բանտարկվեցին, բայց կեսգիշերին նրանք սկսեցին աղոթել և փառաբանել Աստծուն:

Ի՞նչ տեղի ունեցավ.

- *Բանտի դռները բացվեցին,*
- *Շղթաները քանդվեցին,*
- *Եվ փրկություն եկավ պահակապետի տուն:*

Գովաբանությունը կոտրում է շղթաները և փոխում անտեսանելի Իրականությունը:

Այն հոգևոր զենք է հոգևոր պատերազմի մեջ:

Երբ Հուդայի ժողովուրդը հանդիպեց թշնամիներին, Աստված ասաց՝ թող փառաբանողները գնան բանակից առաջ (Բ Մնացորդաց 20.21–22):

Եվ երբ նրանք երգում էին՝ «Գոհացիր Տիրոջը, որովհետև Նրա ողորմությունը հավիտյան է», Աստված շփոթություն բերեց թշնամիների վրա:

ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՀՈՒՍԱՀԱՏ ՀՈԳԻՆ

1 *Տեր Աստծու Հոգին ինձ վրա է, ըստ որում Տէրը օծել է ինձ. նա ուղարկել է ինձ աղքատներին ավետիք տալու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատություն հրատարակելու եւ կապեալներին՝ արձակում.*

Շատերը փորձում են ծանրությունը հաղթահարել զվարճանքով... կամ այլ միջոցներով, բայց միայն Աստծո ներկայությունը՝ գովաբանության միջոցով, կարող է իսկապես վերականգնել կոտրված հոգին:

Եսայի 61.4-ում գրված է, որ գովաբանության զգեստը հագնելուց հետո՝ «նրանք պիտի շինեն հին ավերակները»:

Գովաբանությունը վերականգնում է այն, ինչ ծանրությունը կործանել է՝ ուրախությունը, տեսիլքը, հույսը և զորությունը:

փառքը մոխրի տեղ,

ուրախության յուղ՝ սուգի տեղ,

գովաբանության պատմուճան՝ *հուսահատ հոգու փոխարեն.*

ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒՃԱՆԸ. ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ

Ինչպես հագուստը, այնպես էլ այս զգեստը պետք է ***գիտակցաբար հագնել****:*

Բարձրացրու քո ձայնը – Սաղ. 103.1-3

1 *Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, եւ բոլոր իմ ներսը՝ նորա սուրբ անունը:*

2 *Օրհնիր Տիրոջը, ով իմ անձը, եւ մի մոռանար նորա բոլոր բարիքները.*

3 *Որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո ամեն ցավերը:*

Տիրոջ Հոգին ինձ վրա է, որովհետև ի՛նձ օծեց և ի՛նձ ուղարկեց աղքատներին բարի լուրը ավետելու, սրտով կոտրվածներին բժշկելու, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն, հարստահարվածներին ազատ արձակելու, Տիրոջն ընդունելի տարին քարոզելու (Ես. 61.1-2):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ